


# ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՆՔ, ԻՍԿ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ ԶԿԱ...

*Posted on August 31, 2011 by Keghart*



Category: [Opinions](#)



Վահրամ Աղաջանյան, «Երրորդ ՈՒԺ» թերթի գլխավոր խմբագիր

Ստեփանակերտ, 1 Սեպտեմբեր 2011, Հատուկ «Գեղարդ»ին

### **Փոխան խմբագրականի**

Սեպտեմբերն առանձնահատուկ ամիս է հայ ժողովրդի համար: Սեպտեմբերին մենք երկու անգամ ենք նշում մեր հայրենիքի Անկախության օրը. 2-ին՝ ԼՂՀ-ում, 21-ին՝ ՀՀ-ում: Բացի այդ, ասում են, որ մենք նշում ենք այդ լուսավոր տոնը նաեւ մայիսի 28-ին, որը  նույնպես Անկախության յուրատեսակ օր է, սակայն ավելի շատ, կարծես, դաշնակցական չափումով: Կարծիք կա, որ Անկախության օր կարելի է համարել նաեւ օգոստոսի 11-ը, երբ Հայկ նահապետը տապալեց Բաբելոնի թագավոր Բելին: Մի խոսքով, շատ ունենք այսպիսի անկախություններ, և դա լավ է: Ինչքան հաճախ տոնենք նման տոներ, այնքան, երևի, ավելի անկախ կդառնանք: Ընդհանրապես, կարելի է այս տոնը նշել յուրաքանչյուր եռամսյակը մեկ և անգամ ամեն ամիս: Իսկ ինչո՞ւ ոչ: Մենք այնքան երկար ժամանակ անկախություն չենք ունեցել, որ դրա ավելցուկից ոչ ոք չի տուժի. ապրիր քեզ համար ու մի կախվիր, ներեցեք, կախում մի ունեցիր:

Վահրամ Աղաջանյան, «Երրորդ ՈՒԺ» թերթի գլխավոր խմբագիր

Ստեփանակերտ, 1 Սեպտեմբեր 2011, Հատուկ «Գեղարդ»ին

### **Փոխան խմբագրականի**

Սեպտեմբերն առանձնահատուկ ամիս է հայ ժողովրդի համար: Սեպտեմբերին մենք երկու անգամ ենք նշում մեր հայրենիքի Անկախության օրը. 2-ին՝ ԼՂՀ-ում, 21-ին՝ ՀՀ-ում: Բացի այդ, ասում են, որ մենք նշում ենք այդ լուսավոր տոնը նաեւ մայիսի 28-ին, որը  նույնպես Անկախության յուրատեսակ օր է, սակայն ավելի շատ, կարծես, դաշնակցական չափումով: Կարծիք կա, որ Անկախության օր կարելի է համարել նաեւ օգոստոսի 11-ը, երբ Հայկ նահապետը տապալեց Բաբելոնի թագավոր Բելին: Մի խոսքով, շատ ունենք այսպիսի անկախություններ, և դա լավ է: Ինչքան հաճախ տոնենք նման տոներ, այնքան, երևի, ավելի անկախ կդառնանք: Ընդհանրապես, կարելի է այս տոնը նշել յուրաքանչյուր եռամսյակը մեկ և անգամ ամեն ամիս: Իսկ ինչո՞ւ ոչ: Մենք այնքան երկար ժամանակ անկախություն չենք ունեցել, որ դրա ավելցուկից ոչ ոք չի տուժի. ապրիր քեզ համար ու մի կախվիր, ներեցեք, կախում մի ունեցիր:

Այս տեսանկյունից, այսինքն՝ անկախ զգացողությունների հաճելի հաճախության իմաստով, Հայաստանն աշխարհի, թերեւս, ամենանկախ երկիրն է: Վշտացնում են միայն մանրուքները, մեր ու ձեր բազմօրյա Անկախության փոքր-ինչ տխրեցնող մանրուքները: Իսկ մանրուքը, ինչպես հայտնի է, լուրջ բան է: Ինչպես կասեր ծերուկ Ուիլլերը, մանրուքները ամենից շատ են տագնապեցնում մեզ. ավելի հեշտ է փոխից խուլս տալ, քան «աներես» ճանճից:

Առաջին մանրուքն, անշուշտ, չափից դուրս «անկախ» դատարաններն են: Անկախ Հայաստանում և ԼՂՀ-ում անկախ են բոլորը, այդ թվում՝ դատավորներն ու դատարանները: Նրանք կարող են դատել ձեզ, անկախ նրանից մեղավոր եք, թե՞ անմեղ: Հասկանո՞ւմ եք, այս դատարանները կախված չեն ոչևչից. ոչ երկրի Սահմանադրությունից, ոչ նրա Քրեական Օրենսգրքից, ոչ ընդունված միջազգային նորմերից, ոչ առավել ևս Աստվածաշնչից: Դատում են՝ անիրավորեն կոտրելով հազարավոր մարդկային ճակատագրեր, և «ախ» էլ չեն անում: Դատում են դաժանորեն, անարդար, անմարդկային կերպով, եթե անգամ դուք երիցս իրավացի եք, և դառնում են տասնյակ հազարավոր մարդկանց արտագաղթի լուրջ պատճառներից մեկը: Դատում են ու չեն դատվում: Նրանց «աշխատանքից» դժգոհ է արդեն ՀՀ Նախագահը:

Երկրորդ մանրուքը անկախորեն կիսախեղդված ՉԼՄ-ներն\* են: Ոչ, մեզ ճիշտ հասկացեք. «անկախ» մամուլ մենք ունենք, սակայն այն գործում է, ընդհանուր առմամբ, համաձայն պետական որոշ գերատեսչությունների հաստիքային ցուցակի և ունի (ինչպե՞ս ավելի մեղմ ասենք) տեսողության և լսողության հետ կապված որոշ խնդիրներ. որպես կանոն չի տեսնում և չի լսում այն, ինչ տեսնում և լսում է ողջ հասարակությունը: Սակայն հոգ չէ, փոխարենն այն անկախ է: Որոշ մանրբուրժուական սադրիչներ պնդում են, որ ազատ խոսքը Հայաստանում արգելված է: Սա, իհարկե, ստոր գրպարտություն է, մեր աչալուրջ թշնամիների բանսարկությունը: Հայաստանում ամեն ինչի մասին կարելի է գրել ու խոսել, իսկ ահա **մտածել** պետք է շա-ա-ատ զգուշորեն: Քանի որ **խոսքը** մեզ մոտ ազատել են, իսկ, այ, **միտքը**... Նրա մասին, ցավոք, մոռացել են:

Երրորդ մանրուքն իշխանության օրենսդիր և գործադիր ճյուղերի անկախ անբաժանությունն է: Սակայն եվ այս հարցն է մեզ մոտ գրեթե լուծված, բացառությամբ դատարկ մի բանի, ոչ էական մի մանրուքի. այս **ճյուղերը նույն արմատն ունեն**: Մեկն առանց մյուսի չի աճում, հասկանո՞ւմ եք: Չի կարող մի ճյուղն ինքնուրույն ծաղկել, քանի որ մյուսն այս դեպքում կարող է անսպասելիորեն թռչնել: Սա հին հայկական «բուսաբանություն» է. երբ մեզ մոտ մեկը ծաղկում է, մյուսը միանգամից թռչնում է: Դրա համար էլ գոյություն ունի զգոն Այգեպանը, որը ժամանակին կտրում է յուրաքանչյուր անկախ ճյուղի չափազանց ծաղկած ծաղիկները: Սրանից հետո այս ծառի հարյուր հազարավոր տերևներ, իհարկե, թափվում են, սակայն մի քանի ծաղիկներ, այդուհանդերձ, կենդանի են մնում, և դա չի կարող չուրախացնել մեր հայրենասեր հոգիները: Թող որ քիչ ճյուղեր են ծաղկում, սակայն ինչ-որ մեկը ծաղկում է, չէ՞:

Չորրորդ մանրուքը, որը խանգարում է մեզ անկախ ապրել, իհարկե, Ադրբեջանն է: Չար, զզվելի, վնասարար, ամբողջովին տոտալիտար և տարածքապես չբավարարված: Մի տեղ կկրակի, մի տեղ «կաղտոտի»: Հենց նա է մեր բոլոր դժբախտությունների պատճառը: Բաքուն, իհարկե, շատ բանում է մեղավոր, սակայն մի՞թե ամեն ինչում:

Ասֆալտն անհա՞րթ է: Մեղավորը Ադրբեջանն է: Աշխատավարձե՞րն են ցածր:  
Ադրբեջանն է մեղավոր: Ծորակից ջուր չի գալի՞ս: Մեղավորը դարձյալ Ադրբեջանն է:  
Եթե Ադրբեջանը չլիներ, պետք կլիներ այն հորինել: Քանի որ յուրաքանչյուր անկախ  
իշխանություն անպայման պետք է ունենա իր սեփական արտաքին «ադրբեջանը».  
չատ հարցերում առանց դրա անկախ իշխանությունը ուղղակի չի կարող ծաղկել:

Հինգերորդ մանրուքն երկու շատ թանկ ու հարազատ հասկացությունների չհամընկնելն  
է: Դրանք «**հայրենիք**» և «**պետություն**» հասկացություններն են: Խնդիրն այն է, որ  
մեր քաղաքացիների մի մասն ապրում է **հայրենիքում**, իսկ մյուսը՝ **պետության** մեջ:  
Առաջին մասը վրդովված է, որ պետական բյուջեն ոչ մի կերպ չի համընկնում  
**հայրենիքի** բնակիչների կարիքների հետ: Իսկ մի 50 ընտանիքից կազմված երկրորդ  
մասն ոչ մի կերպ չի կարողանում հասկանալ, թե ինչից է սկսվում այդ, ը-ը... ո՞նց էր, է,  
էդ անտերը, հա՛, **հայրենիքը** ու, ախպեր ջան, ի՞նչ է ընդհանրապես պետք էդ  
**հայրենիքում** բնակվող 2-3 միլիոն չքավորներին:

Վեցերորդ պատճառը կամքի բացակայությունն է: Ոչ այն կամքի, որի միջոցով մենք դեռ  
ողջ ենք՝ չնայած անկախության բոլոր «մանրուքներին»: Այլ ազատության հասնելու  
կամքի, առանց որի ապրել և զարգանալ պարզապես ահնար է: Քանի որ երկրի  
անկախությունն առանց քաղաքացիների ազատության թերարժեք է: Քանի որ  
անկախություն մենք արդեն ունենք, իսկ ազատություն, ավաղ, չկա ու չկա...

*\*Չանգուլաճային Լրատուական Միջոցներ.- ԽԱՄբ.*

